

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/7

9 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի 02.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ-ի թիվ 175/02 որոշման դեմ:

Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 25.01.2016թ. կայացվել է թիվ 175/02 որոշումը՝ հարկ վճարողից ժամանակին չկատարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին, ըստ որի որոշվել է Ա/Ձ Արշակ Կիրակոսյանից գանձել ընդհանուր 1.778.577 ՀՀ դրամ:

Միաժամանակ հարկերը սահմանված ժամկետում չվճարելու հիման վրա 09.02.2016թ. ժամը 15:00-ին հրավիրվել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 2-րդ բաժին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար:

Ա/Ձ Արշակ Կիրակոսյանը, ուսումնասիրելով 25.01.2016թ. թիվ 175/02 որոշման հիմքերը գտնում է, որ այն անհիմն է ներքոհիշյալ պատճառաբանություններով:

Համաձայն 25.01.2016թ. թիվ 175/02 որոշման՝ Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդհանուր 1.778.577 ՀՀ դրամ, որից շրջանառության հարկի գծով պարտավորությունը կազմում է 1.768.322 ՀՀ դրամ, որից ապառք՝ 1.763.003 ՀՀ դրամ, տույժ՝ 5.289 ՀՀ դրամ, որն առաջացել է 2015թ. 4-րդ եռամսյակի հաշվարկով, իսկ եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմում է 10.225 ՀՀ դրամ, որից ապառք 10.000 ՀՀ դրամ, տույժ 255 ՀՀ դրամ, որն առաջացել է 2015թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկով:

Վերը նշվածի կապակցությամբ Ա/Ձ Արշակ Կիրակոսյանը հայտնում է, որ եկամտային հարկի գծով 10.225 ՀՀ դրամ առաջացած պարտավորության մասով նշված որոշումը լիովին անհիմն է, քանի որ 21.01.2016թ. թիվ 02 վճարման անդորրագրով հաստատվում է 2015թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկով առաջացած 10.000 ՀՀ դրամ եկամտային հարկը իր կողմից վճարվելու փաստը:

Ինչ վերաբերվում է շրջանառության հարկի գծով ընդհանուր 1.778.577 ՀՀ դրամ հարկային պարտավորությանը, ապա 19.01.2016թ. Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի կողմից հարկային մարմին է ներկայացվել շրջանառության հարկի հաշվարկ, որում որպես շրջանառության հարկով հարկվող եկամուտների տեսակ սխալմամբ նշվել է 5% դրույքաչափով հարկվող այլ գործունեությունը, սակայն 22.01.2016թ. ներկայացվել է ճշգրտված շրջանառության հարկի հաշվարկ 3.5% արտադրական գործունեությունից հարկվող եկամուտի մասով, համաձայն որի հարկի գումարը կազմում է 1.238.440 ՀՀ դրամ, քանի որ Ա/Ձ Արշակ Կիրակոսյանը իրականացնում է կնիքների արտադրության գործունեություն: Այս դեպքում հարկ է նշել, որ 21.01.2016թ. թիվ 01 վճարման անդորրագրով հաստատվում է, որ Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի կողմից շրջանառության հարկի գծով վճարվել է 930.000 ՀՀ դրամ, հետևաբար 25.01.2016թ.

կայացված որոշման օրվա դրությամբ չկատարված հարկային պարտավորության ապառքը կազմում է 308.440 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա Ա/Ձ Արշակ Կիրակոսյանը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ. թիվ 175/02 որոշումը և որպես չկատարված հարկային պարտավորության ապառք հիմք ընդունել 308.440 ՀՀ դրամը, իսկ առաջացող տույժերը հաշվարկել այդ գումարի նկատմամբ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 22.01.2016թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.778.577 դրամ: Մասնավորապես, շրջանառության հարկի գծով պարտավորությունն առաջացել է 2015թ-ի 4-րդ եռամսյակի հաշվարկով և կազմում է ընդամենը 1.768.322 դրամ, որից ապառք 1.763.033 դրամ, տույժ 5289 դրամ:

Եկամտային հարկի գծով պարտավորությունն առաջացել է 2015թ-ի դեկտեմբեր ամսվա հաշվարկով և կազմում է ընդամենը 10.255 դրամ, որից ապառք 10.000 դրամ, տույժ 255 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 25.01.2016թ-ին ընդունվել է թիվ 175/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Արշակ Կիրակոսյանից 1.778.577 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշմամբ եկամտային հարկի գծով գանձման առաջադրված պարտավորությունը՝ գումարով 10.000 դրամ, Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի կողմից կատարվել է 22.01.2016թ-ին:

Ինչ վերաբերվում է Որոշմամբ շրջանառության հարկի գծով գանձման առաջադրված 1.778.577 դրամի չափով պարտավորությանը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

19.01.2016թ-ին Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի կողմից ներկայացվել է 2015թ-ի 4-րդ եռամսյակի «Շրջանառության հարկի հաշվարկ», որում «Շրջանառության հարկով հարկվող եկամուտների տեսակը» բաժնում «Արտադրական գործունեությունից եկամուտներ» տողի փոխարեն թյուրիմացաբար լրացվել է «Այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտներ» տողը: Արդյունքում, 2015թ-ի 4-րդ եռամսյակի եկամուտը՝ գումարով 35.384.000, հարկվել է ոչ թե 3.5%-ով, այլ՝ 5%-ով: Այնուհետև, Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի կողմից 22.01.2016թ-ին ներկայացվել է 2015թ-ի 4-րդ եռամսյակի ճշգրտված «Շրջանառության հարկի հաշվարկ», որում 2015թ-ի 4-րդ եռամսյակի եկամուտը՝ գումարով 35.384.000, արտացոլվել է «Արտադրական գործունեությունից եկամուտներ» տողում և 3.5% դրույքաչափով հարկվելուց հետո շրջանառության հարկի գումարը կազմել է 1.238.440 դրամ: Այսինքն, 2015թ-ի 4-րդ

եռամսյակի շրջանառության հարկի իրական պարտավորությունը կազմել է 1.238.440 դրամ, որն ամբողջությամբ Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի կողմից կատարվել է 29.02.2016թ-ին:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ա/Ձ Արշակ Կիրակոսյանի կողմից ամբողջությամբ կատարվել են Որոշումից բխող հարկային պարտավորությունները, հետևապես Որոշումը ենթակա է չեղարկման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Պարտավորությունները կատարված լինելու հիմքով չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ-ի թիվ 175/02 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ